« 02 » նոյեմբեր 2026թ. No 6440 - Ա

«ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2026թ.-ից կրկնողաբար, առցանց («Զում» հարթակ)

«Համատեղ առողջապահական նորարարությունների կենտրոն» ՀԿ

- Թիրախային լսարան՝ կլինիկական լաբորատոր ախտորոշման մասնագետներ, լաբորանտներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 10-50 հոգի
- մասնակից ավագ բուժաշխատողներին շնորհել ՇՄԶ 75 տեսական կրեդիտ. մասնակից միջին բուժաշխատողներին՝ ՇՄԶ 50 տեսական կրեդիտ
- Կոնտակտ +37444776701

Օր 1	
16:00-21:00	**Դասախոսություն** Լաբորատոր անվտանգություն, կենսաանվտանգություն և մասնագիտական էթիկա: Կենսաանվտանգության մակարդակները և անհատական պաշտպանության միջոցները: Վարակիչ և թունավոր նյութերի հետ աշխատանքի կանոնները, թափոնների կառավարումը: Արտակարգ իրավիճակների կանխարգելումն ու արձագանքումը լաբորատորիայում
Օր 2	
16:00-21:00	**Դասախոսություն** Նախաանալիտիկ փուլ: Հիվանդի նախապատրաստումը հետազոտության համար: Կենսանյութի ճիշտ նմուշառման, պիտակավորման և փոխադրման կանոնները: Նմուշների պահպանման և կայունության հիմնախնդիրները: Նախաանալիտիկ սխալների տեսակները և կանխարգելումը
Օր 3	
16:00-21:00	**Դասախոսություն** Կլինիկական հեմատոլոգիա: Արյան ընդհանուր քննության ցուցանիշները և դրանց կլինիկական մեկնաբանումը: Հեմատոլոգիական անալիզատորների չափման սկզբունքները (իմպեդանսային, օպտիկական, ֆլուորեսցենտային մեթոդներ) և սարքային սխալների ճանաչումը: Լեյկոցիտար բանաձևի մանրադիտակային գնահատում, պաթոլոգիական ձևերի և բլաստային բջիջների ճանաչում
Օր 4	

16:00-21:00	**Դասախոսություն** Կլինիկական հեմատոլոգիա 2: Անեմիաների դիֆերենցիալ ախտորոշման խորացված ալգորիթմ (երկաթի փոխանակություն, հեմոգլոբինոպաթիաներ, հեմոլիտիկ մարկերներ): Սուր և քրոնիկ լեյկեմիաների, միելոդիսպլաստիկ և միելոպրոլիֆերատիվ համախտանիշների ԱՀԿ դասակարգմանը համապատասխան լաբորատոր ախտորոշում
Օր 5	
16:00-21:00	**Դասախոսություն** Կլինիկական կենսաքիմիա: Ածխաջրային, ճարպային և սպիտակուցային փոխանակության ցուցանիշներ, ներառյալ լիպիդային ենթաֆրակցիաներ: Լյարդային և երիկամային ֆունկցիոնալ փորձեր, GFR հաշվարկման ժամանակակից բանաձևեր: Էլեկտրոլիտների և թթու-հիմնային հավասարակշռության խորացված մեկնաբանում, արյան գազերի վերլուծություն
Օր 6	
16:00-21:00	**Դասախոսություն** Կլինիկական կենսաքիմիա 2: Ֆերմենտային ախտորոշում, սրտային մարկերներ (տրոպոնիններ, BNP/NT-proBNP) և դրանց կինետիկան: Էնդոկրինոլոգիական հետազոտություններ. վահանագեղձի, մակերիկամային և սեռական հորմոնների պանելներ: Ավտոմատացված անալիզատորների կալիբրացիա, խաչաձև ազդեցությունների (ինտերֆերենցիա) կառավարում
Օր 7	
16:00-21:00	**Դասախոսություն** Հեմոստազի ախտորոշում (կոագուլոլոգիա): Հեմոստազի համակարգի ֆիզիոլոգիան և հիմնական ցուցանիշները (ՊՎ/ՄՆՀ, ԱՄԹԺ, ֆիբրինոգեն): Ժառանգական և ձեռքբերովի թրոմբոֆիլիաների լաբորատոր պանել (Factor V Leiden, պրոթրոմբինի մուտացիա, պրոտեին C/S, հակաթրոմբին III): Կարմիր գայլախտի հակամակարդիչի (lupus anticoagulant) և հակաֆոսֆոլիպիդային համախտանիշի ախտորոշում
Օր 8	
16:00-21:00	**Դասախոսություն** Հեմոստազի ախտորոշում (կոագուլոլոգիա) 2: Թրոմբոցիտար ֆունկցիայի հետազոտության մեթոդներ (ագրեգացիա և այլն): ԴԻՀ (դիսեմինացված ներանոթային մակարդում) համախտանիշի լաբորատոր ախտորոշման ալգորիթմ: Ուղղակի պերօրալ հակամակարդիչների (DOAC) և ցածր մոլեկուլային հեպարինի լաբորատոր մոնիտորինգի առանձնահատկությունները
Օր 9	
16:00-21:00	**Դասախոսություն** Ընդհանուր կլինիկական հետազոտություններ: Մեզի ընդհանուր և կենսաքիմիական հետազոտության մեթոդները, նստվածքի մանրադիտակային վերլուծություն: Երիկամային և միզուղիների պաթոլոգիաների լաբորատոր մարկերներ (միկրոալբումինուրիա, պրոտեինուրիայի ընտրողականություն)
Օր 10	

16:00-21:00	**Դասախոսություն** Ընդհանուր կլինիկական հետազոտություններ 2: Կղանքի հետազոտություն, թաքնված արյան իմունոքիմիական որոշում (FIT), ստեատոռեայի գնահատում Շճային, պլևրալ, ասցիտային և ուղեղ-ողնուղեղային հեղուկների ցիտոլոգիական և կենսաքիմիական հետազոտություն
Օր 11	
16:00-21:00	**Դասախոսություն** Կլինիկական մանրէաբանություն և մակաբուծաբանություն: Կենսանյութի բակտերիոլոգիական հետազոտության փուլերը և կուլտուրալ մեթոդների օպտիմալացումը: Հարուցիչների նույնականացման արագացված մեթոդներ, այդ թվում՝ MALDI-TOF մասսսպեկտրոմետրիա
Օր 12	
16:00-21:00	**Դասախոսություն** Կլինիկական մանրէաբանություն և մակաբուծաբանություն 2: Հակամանրէային նյութերի նկատմամբ զգայունության որոշում և հակադիմադրողականության մեխանիզմների (ESBL, կարբապենեմազներ, MRSA) լաբորատոր հայտնաբերում Մոլեկուլային մանրէաբանական մեթոդներ (մուլտիպլեքս ՊՇՌ պանելներ), տուբերկուլյոզի արագացված ախտորոշում
Օր 13	
16:00-21:00	**Դասախոսություն** Իմունոլոգիա և սերոլոգիական ախտորոշում: Իմունային պատասխանի հիմունքները և իմունոլոգիական հետազոտության մեթոդների դասակարգումը ԻՖԱ (ELISA), քեմիլյումինեսցենտային և այլ ավտոմատացված իմունոբանական մեթոդների կիրառումը: Ալերգոլոգիական հետազոտություններ (հատուկ IgE) և իմունային անբավարարությունների լաբորատոր գնահատում
Օր 14	
16:00-21:00	**Դասախոսություն** Իմունոլոգիա և սերոլոգիական ախտորոշում 2: Վարակիչ հիվանդությունների սերոլոգիական ախտորոշում և հայտնաբերման պատուհանի (window period) հաշվառում: Աուտոիմուն հիվանդությունների խորացված պանել. ANA իմունոֆլուորեսցենտային օրինաչափություններ, ANCA, հատուկ հակամարմիններ
Օր 15	
16:00-21:00	**Դասախոսություն** Մոլեկուլային ախտորոշման և ցիտոգենետիկայի հիմունքներ: ՊՇՌ (PCR), իրական ժամանակի ՊՇՌ (real-time PCR) մեթոդի սկզբունքները և կիրառման ոլորտները Մոլեկուլային ախտորոշման նմուշների նախապատրաստումը, նուկլեինաթթուների էքստրակցիայի վավերացումը: Ցիտոգենետիկական և մոլեկուլային-գենետիկական հետազոտությունների ընդհանուր սկզբունքները (կարիոտիպավորում, FISH)